

ԵԶՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԿԵԴՈՆԻԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆԵՐՍԵՍ-ԲԱԿՈՒՐԻ ԳԱՀՀԱԿԵՑՈՒԹԱՆ ՇՈՒՐՋ

Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատության Գ հատորում պահպանվել են մի շաք արժեքավոր փաստաթյուր՝ և տեղեկություններ՝, որոնք լուս են ափում է դարի վերջի և Ը դարի սկզբի Հայաստանի և Աղվանից աշխարհի Եկեղեցիների հարաբերությունների վրա և պարզաբանում երկու Եկեղեցիների փոխհարաբերությունների մի շաք կարևոր կետեր:

Հայ Մ. Կաղանկատվացու երկի, Աղվանից Եղիազար կաթողիկոսի մահվանից հետո, Աղվանից իշխան Վարապ-Տրդատի կը նո՞չ՝ Աղվանից տիկին, քաղկեդոնական աղանդի հետևող Սարամի նախաձեռնությամբ կաթողիկոսական գահին է բազմում Գարդանի Եպիսկոպոս «Երկարնակ աղանդոյն Քաղկեդոնի» Ներսես-Բակուրը: Թե՛ Աղվանից տիկինը և թե՛ Ներսես-Բակուրը, սակայն, ծածկում էին իրենց իսկական համուլումները:

Կաթողիկոսական ընտրության ժամանակ Մեծիրանց Եպիսկոպոս Հովելը «իմնդրեաց ի Ներսիսէ Ճեռնարկ նպովել զժողովն Քաղկեդոնի և կտումարն Լոտնի՝ նովին մատանաւ», որը ստանալուց հետո, «նոյն ինքն Յովել Եպիսկոպոս հանդերձ այլ Եպիսկոպոսունք վերակոչեն զնա ի հայրապետական չնորիս սուրբ աթոռոյն Աղուանից»:

14 տարի անց վախճանվում է Մեծիրանց

¹ Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխ. Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 293—311 (Հռ. Գ, գլ. 9—ԺՄ):

² Անդ, էջ 293, գլ. Գ:

Հովել Եպիսկոպոսը: Ներսես Կաթողիկոսը զնում է Մեծիրանց գավառը և գործակցելով Զաքարիա «վանաց հոր» հետ ձեռք է ձգում իր ստորագրած հավատո թուլյող և ոչնչացնում նույն Զաքարիային ձեռնադրելով Մեծիրանց Եպիսկոպոս: Որից հետո սկսում է բացահայտ արտահայտել իր քաղկեդոնական համուլումները և, Սպառամ տիկնոջ ու այլ համախոհ նախարարների հետ գործակցելով, հայածանք սկսել հայրենավանդ հավատքին հավատարիմ Եպիսկոպոսների և նախարարների դեմ: Նրանց հալածանքն առաջին հերթին ուղղվում է Մեծկողմանց Խորայել Եպիսկոպոսի և Գարդմանի Եղիազար Եպիսկոպոսի դեմ, որոնց և «հայածեալ տարաբնակ արար³»:

Հայրենավանդ հավատքին հավատարիմ Եպիսկոպոսներն ու նախարարները, որոնցից անվանապես իշխում են Կապաղակի եպս. Հովիաններ, Ամարասի եպս. Սահակը, Հոչի եպս. Սիմեոնը և Աղվանից իշխան Շերոն, մեծ ժողով են գումարում, նպովում են Ներսեսին և բոլոր հերձվածողներին⁴ ու գրում

³ Անդ, էջ 293—294, գլ. Գ:

⁴ Անդ, էջ 294, գլ. Գ: Մովսես Կաղանկատվացու մոտ պահպանված Եղիա Կաթողիկոսի «Գիր պարմանի»-ում այս մասին կարդում ենք. «Եւ ժողովեցան առ իս հոգւորք և մարմնաւորք, և ցուցին ինձ զան գիր, որ յասաց նպովեալ և ի բաց ընկեցեալ եր Վներսէ ի Աղուանից Կաթողիկոսութենէն: Թէայտ և առ բանակարգութեամբ կացեալ եր յաքոսն, սակայն նոյն Եպիսկոպոսումքն և բովանդակ ուխտ Եկեղեցու վերատին նպովեցին գորվ և կնքով, Աստուծոյ միջնորդութեամբ և մեօք հանդերձ և պայմանեցին,

են հայոց Եղիա կաթողիկոսին, տեղյակ պահելով նրան Եղելությանը, և խնդրում դարձանել իրենց պառակտումը՝ իբրև իր անդամաների⁵:

Հայոց Եղիա կաթողիկոսը դիմում է Արդյունքիք ամիրմումսիին⁶ և հայտնում, որ Աղվանից կաթողիկոսը, որ նստում է Պարտավում, «խորհուրդ արարեալ ընդ կայսրն Յունաց» հեռացել է հայրենավանդ հավատքից և քարոզում է Հունաց դավանությունը, «վիճ հաւատ և ի միաբանութիւն նման եկեւցեն»⁷: Աքիմիտիք ամիրմումսին պատասխան նամակով⁸ երաշխավորում է Եղիային⁹ տօրինել անհրաժեշտը և ուղարկում նրան իր «ծառաներից» մեկին «քապում զօրօք» Պարտավում «ապատամբների» հետ դատաստան տեսնելու համար:

Չորացած արաբների հովանավորությամբ՝ Եղիա կաթողիկոսը Խորխոռունեաց Սիմեոն, Վաստունեաց Սարգիս, Ռոստակա Սարգիս եպիսկոպոսների, Հովհաննես վարդապետի և այլոց ուղեկցությամբ¹⁰, զնում է Պարտավ, ժողով գումարում և զահընկեց անուն Ներսեսին: Նույն ժողովում կաթողիկոս է ընտրվում Սիմեոն սարկավագապետը և ձեռնադրվում «ի հայրապետութիւն Աղուանից», իսկ Ներսեսը ձերբակալվում է և չուտով վախճանվում շղթաների մեջ՝ 14 տարի ուղղափառությամբ և 3 ու կես տարի չարափառությամբ կաթողիկոսություն անելուց հետո:

Աղվանից ժողովը Հայոց Եղիա կաթողիկունին է տալիս մի ձեռնարկ «վասն միաբանութեան և ուխտի հաստատութեան Հայոց և Աղուանից», ուր նկովում են բոլոր հերետիկոսները¹¹:

Երկու եկեղեցիների փոխհարաբերությունների ճշտման համար կարևոր նշանակություն ունի Ձեռնարկի հետևյալ հատվածը. «Նոյնպէս և վասն ձեռնադրութեան կաթողիկոսաց Աղուանից այսպէս կանոնեցաք. քանզի ի սուր ինչ ժամանակ կաթողիկոսը

եթէ կամք ի նոյն հաստատութեանս և ոչ խառնիք ի պիտի աղանդն Քաղկեդոնի և ընդ չար վարդապետութիւնն Բակուրայ», էջ 303, գլ. Թ:

⁵ Անդ, էջ 295, գլ. Դ:

⁶ Նամակի սկզբում նրան կոչում է Տիեզերակալ Արդյայի ամիրմունոյ, իսկ իրեն՝ Եղիա՝ հայոց եպիսկոպոսապետ, էջ 295:

⁷ Անդ, էջ 295—296, գլ. Ե:

⁸ Անդ, էջ 296, գլ. Զ:

⁹ Եղիան նամակում կոչվում է Եղիա Արմենեան ապօհ Չարլիդ, մի բան, որ խոսում է նամակի հարազատության մասին:

¹⁰ Անդ, էջ 296—297, գլ. Ե:

¹¹ Անդ, էջ 298—302, գլ. Ը:

մեր վկարգն յեպիսկոպոսաց մերոց առին, իսկ այժմ զի անփորձ և անընտրող գործով եղան և հերձուածեցաւ աշխարհս, վասն այդորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ և ձերոյ հայրութեանդ, եթէ ձեռնադրութիւն հայրապետութեանս Աղուանից ի սուրբ Գրիգորի աթոռոյն լիցի՝ միաբանութեամբ աշխարհի՝ որպէս և էրն ի սրբոյն Գրիգորյա անտի, զի անդ ընկալաք լուսաւորութիւն և ծամարտութեասք գիտեմք, թէ զոր դուք ընտրէք, համոյ Աստուծոյ է և մեզ: Եւ յայսմ պայմանն իմ լիցի իշխանութիւն ումեք արտաքրոյ եղանել և այլաձև ինչ առնել. ապա եթէ ոչ անվաւեր և ունայն լիցի և մի համարեսցի ձեռնադրութիւնն այն ընդունեից»¹²:

Սույն ձեռնարկը թվագրված է «ՁԵ Երրոր ամսն Տաճկաց և ի հայ թուականիս ՃԽԸ յամնեանն իրութից»¹³:

Ձեռնարկի տակ կնքել և ստորագրել են Աղվանից Սիմեոն կաթողիկոսը, Կապատակի Հովհաննես, Հոջո Սիմեոն, Ամարասի Սահակ, Մեծ Կոււենից Սահակ Եպիսկոպոսները, բազմաթիվ վանահայրեր, Աղվանից իշխան Շեր պատրիկը, Աղվանից սպարապետ Զուանքը պատրիկը և բազմաթիվ այլ իշխաններ¹⁴:

Ստանալով այս ձեռնարկը՝ Եղիա կաթողիկոսը «Գիր պայմանի»¹⁵ է տալիս ժողովականներին, որով թելադրում է, որ ընդունեն մոլորվածներին, եթէ «կան ի նոյն պայմանի և յաւանդութեան սուրբ հարցն», իսկ եթէ «թիւրեսցի ոք յայսմ պայմանէս, կաթողիկոս կամ եպիսկոպոս, չունի իշխանութիւն ի ձեր վերայ»: Սույն գրությունը, ինչպես նաև Ձեռնարկի պատճենը Եղիա կաթողիկոսը ի պահ է հանձնում Ներսմիհրի ուխտի վանահայր Քշիկին¹⁶:

Այս հեաքերն իրենց արտահայտությունն են գտել նաև այլ պատմիչների երկերում:

Այսպէս, Ստեփանոս Ասողիկը գրում է. «Սա (Եղիա կաթողիկոսը.—Ե. ք. Պ.) իրասանաւ Արդյունքայ արար զժողովն ի Պարտաւ, և ետ տանել Վներսէս Բակուր՝ չկաթողիկոս Աղուանից առ ամիրապետն, զի ջա-

¹² Անդ, էջ 302:

¹³ Անդ, էջ 302:

¹⁴ Անդ, էջ 300, 302:

¹⁵ Անդ, էջ 303—304, գլ. Թ:

¹⁶ Ներսմիհրի վանքը, որը կոչվել է նաև Զրվածիկ կամ Եղեշ առաքայի վանք, և դարի Բ կեսին և Ը դարի սկզբին եղել է Աղվանից կաթողիկոսության գրապահոց-արխիվը: Տես. Եղիկ քնն. Պետրոսյան, Ստեփանոս Սյունեցու «Բան պատասխանույց առ վարդապետն Աղուանից» թուլլը, «Հայուածին» 1984, Ա, 50:

նայր վԱղուանս քաղկեդոնիկ առնել¹⁷»: Ըստ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու՝ Աղվանից եպիսկոպոսապետ Ներսեսը, որ «չարադաւան գտանէր չար աղանդոյն քաղկեդոնի» և մի տիկին, «որ յայնժամ հրամանատար էր Աղուանից», ցանկանում են քաղկեդոնականությունն ընդունել տալ իրենց կողմերում: Աղվանից նախարարները, սակայն, դիմում են Հայոց Եղիա կաթողիկոսին, որը և նախ փորձում է սիրով և հորդորներով ուղղել մլորդվածներին, իսկ եթե տեսնում է նրանց անդրդվելիությունը, դիմում է Օմար ամիրապետին՝ մեղադրելով նրանց, թե «ի բաց բերեալ են ի հնապանդութենէ մեծի տէրութեանդ ձեռոյ... վթագաւորս Հռոմոց քարոզեն և ի նա զաշխարհս մեր հնարին դարձուցանել»: Ամիրապետն իր ծառաներից մեկին ուղարկում է Ներսեսին և տիկնոջը ձերբակալելու համար, իսկ Հայոց Եղիա կաթողիկոսը այլ եպիսկոպոսապետ է հաստատում Աղվանից Աթոռին¹⁸:

Դրասխանակերտցու մոտ հանդիպող իիմանական տարբերությունը ամիրապետի անունը է՝ Օմար (717—720), մինչ ըստ Մոլիսես Խաղանկատվացու և Աստղիկի Եղիա կաթողիկոսը դիմել է Արդ ալ-Մալիքին (685—705): Սույն դեպքը հիշատակում է նաև Վարդան Արևելցին, որ պարզապես հիշում է, թե Եղիա կաթողիկոսը «ի ձեռն Ումարայ» աւքտորում է Ներսեսին, առանց ճշտելու Ումարի ով լինելը¹⁹:

Սովում Կաղանկատվացուն է հետևում նաև Կիրակոս Գանձակեցին: Այստեղ նոյնպես Եղիա կաթողիկոսը դիմում է Արդ ալ-Մալիքին: Գանձակեցու մոտ հետաքրքիր նորությունն այն է, որ Աղվանից եպիսկոպոսներն ու նախարարները «մոլրհակ» են տալիս ամիրապետի ներկայացուցչին, «ով առաս հրամանի կաթողիկոսին հայոց ոչ ձեռնադրեսցեն կաթողիկոս Աղուանից»²⁰:

Սույն դեպքին անդրադառնում է նաև Ստեփանոս Օրբեյանը, Հայոց և Աղվանից հկենեցական հարաբերությունների պարզաբանաւան առիթով: Ըստ Ստ. Օրբեյանի, Աղվանից առաջին եպիսկոպոսը ձեմնադրվել է Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից՝ Աղվանից Ուռնայր արքայի խնդրանքով «և կացեալ ի

հնապանդութեան հայոց աթոռակալացն զամս 440, ի հայոց արին ձեռնադրութիւն Աղուանից կաթողիկոսին, զի հայոցն պատրիարք էր և Աղուանիցն՝ արք եպիսկոպոս և այս ի ժամանակս քանսիինդ կաթողիկոսաց հայոց մինչ ի Տէր Աբրահամ»: Հայոց Կոմիտաս կաթողիկոսի օրոք «յարձեալ հնապանդին Աղուանք հայոց... մինչ ի Տէր Եղիա»: Մեկ հետաքրքրող դեպքը պատմելուց հետո Ստ. Օրբեյանը գրում է, որ դրանից 137 տարի հետո, մինչև հայոց կաթողիկոս Գևորգ Գառնեցին (877—897) Աղվանից հայրապետները ձեռնադրվել են հայոց կաթողիկոսների կողմից²¹: Ինչպես նկատեցինք արդեն, Ստ. Օրբեյանը մեկ հետաքրքրող դեպքն օգտագործում է իրու ապացուց իր թեպի համար և այդ է պատճառը, որ նրա մոտ բացակայում են մանրամասնությունները, ինչպես օրինակ ամիրապետի անունը և այլն:

Ամփոփելով.

Աղվանից կաթողիկոս Ներսես-Բակուրը որոշ ժամանակ (14 տարի) ուղղափառությամբ հայրապետություն անելուց հետո գրածակցում է Աղվանից իշխան Վարապ-Տրդատի կողոց՝ Սպարամի հետ և փորձում քաղկեդոնականությունը տարածել իրենց երկրուն, այդայսով բյուզանդական ավեցցության տակ զցելով Աղվանից աշխարհը: Այն հանգամանքը, որ Ներսես կաթողիկոսը երկար տարիներ ուղղափառ է եղել, խոսում է այն մասին, որ նրա և Աղվանից իշխանութիւն Սպարատի քաղկեդոնականությունը պայմանավորված է եղել կուտ քաղաքական նկատառումներով: Այդ կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Աղվանից իշխան Վարապ-Տրդատը իր Գագիկ և Վարդան որդիների հետ պատանդ էր բյուզանդական արքունիքում²², և Սպարամ տիկինը կարող էր ամեն ինչ անել իր ամուսնուն և զավակներին ակատելու համար:

Ներսես կաթողիկոսի և Սպարամ իշխանութիւնու այս քաղկեդոնականությունը, սակայն, հանդիպում է լուրջ դիմադրության Աղվանից եպիսկոպոսների և իշխանների մեծամասնության կողմից, որոնք և ժողով գումարելով գահընկեց են հոչակում Ներսես կաթողիկոսին և այդ մասին տեղյակ պահում հայոց Եղիա կաթողիկոսին:

Եղիա կաթողիկոսը դիմում է արաբական տերության օգնությանը: Սովում Կաղանկատվացու մոտ պահված է Եղիա կաթողի-

¹⁷ Ստեփանոս Տարօնեցոյ Ասողիկան Պատմութիւն տիեզերական, Ս-Դետերքուրգ, 1885, 102:

¹⁸ Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Երուսաղեմ, 1867, էջ 126—128:

¹⁹ Վարդան Բարձրաբերդցի, Պատմութիւն Տիեզերական, Մուսկա, 1861, էջ 100:

²⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխ. Կ. Ա. Մելիք-Շիանշանյանի, Երևան, 1961, էջ 196—197:

²¹ Ստեփանոս արք. Օրբեյան, Պատմութիւն նախական Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 279—281:

²² Տես Բ. Ա. Ուղարքայան, Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 266:

կոսի նամակը ուղղված Արդ ալ-Մելիք ամիրաբետին (685—705): Նույն անունն ունեն նաև Ասողիկը և Կիրակոս Գանձակեցին: Մինչ ըստ Հովհաննես Դրասխանակերտցու Եղիաս դիմել է Օմար ամիրապետին (717—729): Վարդան Արևելցին հիջում է Օմար անունը՝ առանց նշելու նրա պաշտոնը:

Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի²³, Եղիա կաթողիկոսը դիմել է ոչ Արդ ալ-Մալիքին, ոչ Օմարին, այլ Վալիդին (705—715), իսկ ըստ Բ. Ա. Ուկուբարյանի²⁴, Եղիա կաթողիկոսը դիմել է ոչ թե ամիրապետին, այլ Պարտավում նստող նրա ներկայացուցիչ Արդմելիք էմիր Մումինին: Այս նոր վարկածի հասար, սակայն, հեղինակը ոչ մի բացատրություն չի տալիս:

Այս խնդրի լուծումը սերտորեն կապված է տվյալ դեպքի թվականի ճշտման հետ: Այս հարցում նովնային արտահայտվել են բավարիվ կարծիքներ: Այսպես, ըստ Մակար Եպս. Բարիսուտարյանցի²⁵ հաշվումների՝ Եղիա կաթողիկոսը Պարտավ է եկել 700 թվականին: Մաղաքիա արք. Օրմանյանը²⁶ այս դեպքերի հավանական թվականը համարում է 713-ը: Արքահամ Զամինյանը²⁷ այն դնում է 705 թվականին: Ըստ Զ. Բունիաթովի, Ներսես-Բակուրը գահընկեց է արվել 704 թվականին²⁸: Ըստ Բ. Ա. Ուկուբարյանի. «Վերսուիչյալ թվերի միակ ճիշտ հիմքը Ներսես-Բակուրին դատապարտելու համար գումարված ժողովի արձանագրությունն է (Երդմանաբություն), որը կարենորագույն փաստաթուղթ է, մեջ է բերված մատենագրի կողմից, ամենայն հավանականությամբ, անփոփոխ: Իսկ մյուս վկայությունները մատենագրինն են, որոնք կարող են ճշգրտված չլինել: Ժողովի ներկայացրած Երդմանաթյուի մեջ հիշվում է. «Գերեցա, գիրս... ի հայ թուականիս հարիկ քառանուն և ութն յամսեան հրոտից»: «Հըրուտիցը» հովհան էր: <Այս թվական 148-ն է կիսի քր. 699-ը: Ուրեմն, Ներսես-Բակուրը գահընկեց է արվել 699-ին»²⁹:

Բ. Ա. Ուկուբարյանն անտեսում է սակայն այն փաստը, որ նույն փաստաթյունը, ինչպես տեսանք, հայոց ձևուն թվականի դիմաց

նշանակված է նաև «ՁԵ երրորդ ամին Տաճկաց», որ համընկնում է 704 թվականին:

Բարեբախտաբար, Մ. Կաղանկատվացու երկից անկախ պահպանվել է Եղիա կաթողիկոսի «Գիր պայմանի»-ի մի այլ, ավելի ընդարձակ տարբերակ³⁰, որի վերջում դրված է «Եւ գրեցա գիրս այս վկայութեամբ երկունց կողմանց ի ՃԾԲ թուականութեան հայոց և ՁԵ թուականութեան Տաճկաց»³¹:

Ըստ նոյն թղթի հրատարակիչ Ա. Հ. Հակոբյանի հաշվումների, «Պարտավի ժողովը տեղի է ունեցել 704 թ. Քենտրվարի 27-ի և մարտի 28-ի միջև»³²:

Այս թվականը հաստատվում է մեկ այլ պատմական վավերագրով, որ հրատարակել է Արշակ Տեր-Միքելյանը Սամվել Անեցու ժամանակագրության հրատարակության առթիվ, նույն գրքի ծանոթագրություններում: Այն Սղվանից Միքայել կաթողիկոսի գումարած ժողովի որոշումն է, որ թվագրված է «ՁԸ թուականութեան հայոց»³³:

Սույն փաստաթյուի աշխարհաբար թարգմանվելով տեղ է գտնել Հայ ժողովուրի պատության քրեստումատիայի Ա հատուրում³⁴: Կազմողները թեև ճշտորեն եկրակացրել են, որ բնագրում հիշված Եղիա հայոց կաթողիկոսը Եղիա Ա Արծիշեցին է, ըստ պալանդական թվագրության՝ 703—717, սակայն որոշ շփոթության են մատնվել «ՁԸ թուականութեան հայոց» տվյալի հարցում: Այսպես, նրանք գրել են. «Քիչ հավանական է, որ Ե դարի առաջին կեսում կարող էին գործածել հայկական թվականը: Բայց եթե այդ իրողությունը համարենք՝ հայոց ՁԸ թվականը կիամապատասխանի 639—640 թվականներին»³⁵:

³⁰ Ա. Հ. Հակոբյան, Եղիա Արծիշեցի կաթողիկոսի նորահայտ թույլը, ՊԲՀ, 1981, հար. 4, էջ 140—152, թագիրը՝ 149—151:

³¹ Այս նոր տվյալի լույսի տակ համեմատելով Կաղանկատվացը և այս թղթի տվյալները, ունենում ենք հետևյալ աղյուսակը.

Կաղանկատվացի

Եղիա

ՃԽԸ հայոց = 699

ՃԾԲ հայոց = 703/4

ՁԵ Տաճկաց = 704

ՁԵ Տաճկաց = 704

Պարզ է, որ Կաղանկատվացը մոտ պահպանված ՃԽԸ-ն սխալ ընթերցում է:

³² Ա. Հ. Հակոբյան, անդ, էջ 148:

³³ Սամուելի քահանայի Անեցու հաւաքմունք ի գործ պատմագրաց, աշխ. Արշակ Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893, էջ 286:

³⁴ Հայ ժողովուրի պատմության քրեստումատիա, Երևան, 1981, էջ 729—730:

³⁵ Անդ, էջ 730:

²³ Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, հա. Ա, Պէյրութ, 1959, էջ 812:

²⁴ Բ. Ա. Ուկուբարյան, անդ, էջ 269:

²⁵ Մակար Եպս. Բարիսուդարյանց, Պատմություն, Աղվանից, հա. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 121:

²⁶ Մաղաքիա արք. Օրմանյան, անդ, էջ 814:

²⁷ Արքահամ Զամինյան, Հայոց Եկեղեցու պատմություն, հա. Ա, Նոր-Նախիջևան, 1914, էջ 137—138:

²⁸ Ըստ Բ. Ա. Ուկուբարյանի, անդ, էջ 272:

²⁹ Բ. Ա. Ուկուբարյան, անդ, էջ 273:

Եղիա Արճիշեցի կաթողիկոսը Աղվանքի կաթողիկոս է ձեռնադրում Սիմեոնին, որը մեկ ու կես տարի հետո մահացել է, և նրան հաջորդել է Միքայել կաթողիկոսը³⁶: Եղիա կաթողիկոսի գումարով ժողովի ձեռագրերում հիշված Աղվանից եպիսկոպոսներից կապանակի եպս. <ովհաննեսը և Ասմարասի եպս. Սահակը հիշվում են նաև Միքայել կաթողիկոսի ժողովի գրության մեջ: Այստեղ հիշվում է նաև Ներսես-Բակուրի ձեռնադրած Մեծիրանց եպիսկոպոս Զաքարիան, որ հաջորդել էր <ովենին: Երկու ժողովներում էլ Աղվանից իշխաններին գիշավորում է Աղվանից իշխան Շերո պատրիկը: Բացի այդ, բազմաթիվ իշխանների անուններ համընկնում են միմանց:

Պարզ է, որ Արշակ Տեր-Միքելյանի իրատարակած գրությունը չի կարող 639—640 թվականներին վերաբերել: Այստեղ պետք է կատարել մի պարզ լուծում. «ԶՀ թուականութեանս հայոց»-ը պետք է կարդալ «ԶՀ թուականութեան տաճկաց», որ կիամապա-

տասխանի 707 թվականին: Արաբական ԶԵ թվականին Աղվանից կաթողիկոս է դառնում Սիմեոնը, որին մեկ ու կես տարի հետո հաջորդում է Միքայելը՝ 705/6 թ., որը՝ 707 թ. գումարում է վերոհիշյալ ժողովը:

Այսպիսով և ոչ մի հիմք չենք ունենա կասկածի տակ դնելու Մովսես Կաղանկատվացու մոտ պահպանված նամակների վավերականությունը, և կարող ենք հաստատապես ասել, որ 703—704 թթ. Եղիա կաթողիկոսը նամակով դիմել է Արդ ալ-Մալիք (+705) ամիրապետին: Խոկ ինչպես է մուտք գործել Օմար անունը հայ պատմիչներից ումանց երկերում, ձգգրիտ դժվար է ասել: Սակայն անհավանական չէ հետևյալ բացատրությունը. Օմար ամիրապետ է եղել 717—720 թթ.: Դա ինքնին ենթադրել է տալիս, որ նա 704 թ. կարող էր Արդ ալ-Մալիքի հավատարիմ պրավարներից մեկը լինել: <Ավանաբար ինց նրան էլ Արդ ալ-Մալիքն ուղարկել է Եղիա կաթողիկոսին օգնական՝ Ներսեսին պատժելու համար: Եվ ինց այս ինաստով էլ կարելի է հասկանալ Վարդան Արևելցու այն արտահայտությունը, թե Եղիան «ի ձեռն Ումարայ» աքսորում է Ներսեսին:

³⁶ Մովսես Կաղանկատվացի, անոյ, էջ 311:

